

**Փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը Աշտարակի Պերճ Պռոշյանի տուն
թանգարանում՝ Տարեցների տոնի կապակցությամբ**

/02.04.2014թ./

Տարիներն իմաստություն են հաղորդում: Հարգելի իմաստնացած մանկավարժներ, բժիշկներ, սոցիալական, քաղաքական, հասարակական, մշակութային ոլորտի ներկայացուցիչներ: Այսօր հավաքվել ենք այստեղ՝ շնորհավորելու Ձեզ եւ ասելու մեր շնորհակալությունը ձեր կատարած գործի համար: Դուք եք, որ մեր մարզում ձեր վիրված աշխատանքով ու ձեռքբերումներով պատմություն եք կերտել: Ամեն անգամ ձեր հետ հանդիպումը հաճելի եւ սպասված իրողություն է բոլորիս համար:

Որպես հարգանք, ձեր առաջարկության. Աշտարակ քաղաքում ստեղծում ենք „Տարեցների ակումբ,, որտեղ դուք կհավաքվեք, կգրուցեք, կբարձրացնեք ձեզ հուզող հարցերը, կանեք առաջարկություններ ամենատարբեր թեմաների շուրջ:

Միջոցառումից հետո հրավիրում ենք բոլորիդ Աշտարակի մշակույթի տուն՝ ունկնդրելու հայ աշուղական երգի համերգ:

Առողջություն բոլորիդ եւ խորին հարգանք: